ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» սեպտեմբերի 2020 թվականի N 207

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի օգոստոս ամսին ընդունված որոշումների Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանեցված տարբերակը:

Առդիր 11 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

03.09.2020թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«27» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 41

ԱՐԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 134-րդ և 135-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Հացիկ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 27-ին կայացած թիվ 2-Ա նիստի արձանագրությունը, Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 3 փողոց 15/1 բնակելի տուն հասցեում փաստացի բնակվող քաղաքացի Քրիստինե Հրաչյայի Տիգրանյանի 27.07.2020թ. դիմումը, Արինա Արթուրի Վարդանյանի ծնողների կողմից տրված համաձայնագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի անչափահաս բնակիչ Արինա Արթուրի Վարդանյանի՝ ծնված 02.01.2014 թվականին, ծննդյան վկայական II-PK N 730703, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ ՌԴ քաղաքացի Քրիստինե Հրաչյայի Տիգրանյանին՝ ծնված 21.02.1983 թվականին, անձնագիր 20 17 144834, տրված ՌԴ Վորոնեժի մարզի ՆԳՆ Գլխավոր վարչության կողմից:
2. Հսկողություն սահմանել Արինա Արթուրի Վարդանյանի խնամակալ Քրիստինե Հրաչյայի Տիգրանյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Եղիազարյան

27.08.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

<<24>> օգոստոսի **2020թ.** **ՈՐՈՇՈՒՄ** **Թիվ 41-Ա**

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020թվականի օգոստոսի 17-ի թիվ 01/10.1/04946-2020 հանձնարարականը.

Որոշում եմ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկի համայնքապետարանի աշխատակազմում բարեվարքության հարցերով կազմակերպիչի գործառույթների իրականացումը վերապահել աշխատակազմի գլխավոր մասնագետ Կարինե Պողոսյանին:
2. Հացիկ համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի թիվ 4-Ա որոշման հավելված 2-ում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«21» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 40

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. Քաղաքացի Նաիրա Օնիկի Գևորգյանին պատկանող 04-058-048-007 տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 17-րդ փողոց 1 փակուղի 1/2 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 21.08.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«21» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 39

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 35 և ԹԻՎ 37 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

Որոշում եմ

1. Համայնքի ղեկավարի 07.08.2020թ-ի «ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ԹՈՎՄԱՍԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 35 որոշումը և 13.08.2020թ-ի «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ԹՈՎՄԱՍԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ, ՆԵԼԼԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 37 որոշումը ուժը կորցրած ճանաչել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 21.08. 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«17» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 38

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ԱԼԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԿ ԱԼԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակչուհի Արևհատ Սարգսի Վարդանյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 5-րդ փողոց 1 շենք 2 բնակելի տուն հասցեում գտնվող բնակավայրի, 700 մ^2 տնամերձ օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 5-րդ փողոց 1 շենք 2 բնակելի տուն հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Արևհատ Սարգսի Վարդանյանի (ծնված 15.12.1951 թվականին), Վարդան Ալբերտի Վարդանյանի (ծնված 24.01.1976 թվականին) և Շուշիկ Ալբերտի Վարդանյանի (ծնված 26.09.1973 թվականին) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 700 քառ. մ օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 36.6 քառ. մ (կառուցված 1960թ.) և բնակելի տան՝ 27.6 քառ. մ (կառուցված 1974թ.), թիվ 2 ծածկի՝ 27.3 քառ. մ (կառուցված 1974թ.) և թիվ 3 անասնաշենքի՝ 23.40 քառ. մ (կառուցված 1960 թ.) նկատմամբ:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արևհատ Սարգսի Վարդանյանի (ծնված 15.12.1951 թվականին), Վարդան Ալբերտի Վարդանյանի (ծնված 24.01.1976 թվականին) և Շուշիկ Ալբերտի Վարդանյանի (ծնված 26.09.1973 թվականին) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. 700 քառ. մ հողամասին կից 140 քառ. մետր ավել տարածքը, որը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Արևհատ Վարդանյանին, Վարդան Վարդանյանին և Շուշիկ Վարդանյանին:

4. 700 քառ մ հողամասին կից մնացած 355 քառ մ հողատարածքը վաճառել Արևհատ Սարգսի Վարդանյանին, Վարդան Վարդանյանին և Շուշիկ Վարդանյանին: տվյալ հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

5. Համայնքի ղեկավարի նախկին՝ 14.08.2017 թվականի թիվ 57 որոշումն համարել անվավեր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 17.08. 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«13» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 37

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ԹՈՎՄԱՍԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ, ՆԵԼԼԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանը դիմել է 14.03.2016 թ-ին աճուրդ վաճառքով ձեռք բերած Արմավիր-Իսահակյան- Գյումրի- 6 հասցեում գտնվող բնակավայրի 0.04046 հա հողամասի վրա կառուցված շենք-շինության նկատմամբ իրավունքի գրանցման խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ., «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

Որոշում եմ

1. Գրանցել Արմավիր-Իսահակյան-Գյումրի-6 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանի (ծնված 03.09.1975թ.) և Նելլի Սերյոժայի Թովմասյանի (ծնված 02.08.1979թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.04046 հա օրինական հողամասի վրա գտնվող թիվ 1 խանութի՝ 89.49 քառ. մ (կառուցված 2011թ.) և ծածկի՝ 18.72 քառ. մ (կառուցված 2011թ.) նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանի (ծնված 03.09.1975թ.) և Նելլի Սերյոժայի Թովմասյանի (ծնված 02.08.1979թ.) գույքային իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված շենք- շինության ու հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Համայնքի ղեկավարի նախկին թիվ 35 որոշումը համարել անվավեր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ

13.08.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 36

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը,

Որոշում եմ

1. Քաղաքացի Գեղամ Գագիկի Մաղաքյանին պատկանող 04-058-041-005 ծածկագրով արտադրական նշանակության հողամասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 4/1:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Համայնքի ղեկավարի նախկին 21.07.2020 թ-ի թիվ 32 որոշումը համարել անվավեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

03.08.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«07» օգոստոսի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 35

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ԹՈՎՄԱՍԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանը դիմել է Արմավիր-Իսահակյան-Գյումրի- 6 հասցեում գտնվող բնակավայրի 0.04046 հա հողամասի վրա կառուցված շենք-շինության նկատմամբ իրավունքի գրանցման խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Գեղամ Իսկանդարյանի դիմումը

Որոշում եմ

1. Գրանցել Արմավիր-Իսահակյան- Գյումրի- 6 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանի (ծնված 03.09.1975թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.04046 հա օրինական հողամասի վրա գտնվող թիվ 1 խանութի՝ 89.49 քառ. մ (կառուցված 2011թ.) և ծածկի՝ 18.72 քառ. մ (կառուցված 2011թ.) նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գեղամ Թովմասի Իսկանդարյանի (ծնված 03.09.1975թ.) գույքային իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շենք- շինության ու հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ
07.08.2020թ.